



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՐԻ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԵՒԱՅ ՀԱՐԱԹ 24 ՕԳՈՍՏՈՍԻ 1863

ԹԻՒ 708

ԶՄԻՌՆԵՒԱՅ 24 ՕԳՈՍՏՈՍԻ

ՔԱՂԱՔԱՐԻ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻԵՒԱՐՁ

ԱՐՇԱԼԱՌԱՅՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Լրագրոյն նախընթաց 707 հոգի թիւը՝ Արշալոյսոյ քառանկարի շարքով տարւոյն դուրս բացաւ . զոր մասնայանք յիշատակելու նոյն թուոյն մէջ :

Քառանկարն տարի անընդհատ շարունակութեամբ հրատարակուած հայերէն լրագրի մէջ ներկայ է , կարծեմք , միտքովարարի և վստահ ըլլալ թէ կարող եղած է , օգտակար ծառայութիւններ մատուցանելով Ազգին ընդհանրութեանը՝ անոր համակրութիւնը ձեռք բերել . քանզի առանց այս պարագայիս , անհնար էր որ Արշալոյսը կենդանի մնայ մինչև ցայսօր :

Արտերիս այսպիսի միտքովարարական վստահութեամբ լեցուն , քաջայայտ լինելով ողջամիտ հատարակութիւնը միեւնոյն համակրութեամբ պիտի շարունակէ պատուել մեր լրագրի և պիտի քաջալերէ զայն իւր վեհանաճառ կան պաշտպանութեամբ . որուն արդեանք ըլլալու համար , մեր կողմանէ ամեն հնարաւոր ջանք ի գործ պիտի դնենք և ձեռք բերենք եկածին չափ պիտի աշխատենք միշտ և համարադրելի նպատակաւ զարգացան և ուսումնասիրական յառաջագնացութեան Ազգին :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԵՐԹԻՎՆ

Թեպէտև Ռուսաց կառավարութիւնը զնուորապետն պատրաստութիւններ կընէ , այսու ամենայնիւ պատերազմի նշաններ չեն տեսնուիր ի կողմանէ Անգլիոյ , Գաղղիոյ և Աւստրիոյ ի պաշտպանութիւն բոլորեալ խնդրոյն : Այս տեղութիւնները՝ յիշեալ խնդրոյն համար , զատ զատ նոր աղբարարութիւններ յուղարկեցին Ռուսաց կառավարութեանը , անոր ծանր ուղղորդութիւնը հրաւիրելով Բոլորիայի դործոց վրայ . սակայն յուղարկուած նամակներուն ոճը շատ սիրալիր և բարեկամական է ու սպառնալէսայ ստուերը անշամ չկայ անոնց մէջ : Ուստի կարելի է թէ այս անգամ Ռուսիան ի շնորհս յիշեալ տեղութեանց քանի մի զինուորներ ընէ վասն անպարզ հաշտութեան Բոլորիայի բնակչոց :

ՔԱՂԱՔԱՐԻ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Արդոյ Լաւաղիւր Արշալոյսոյ (1) :

Պանարմա , 25 Յուլի 1863 :

Պաշկ և ձեզ ծանօթ ըլլայ որ աշխարհ քառանկարական թատրոն մէջ մէկ անգամ կապած միջակայք կը ձգեն , որուն շարքը պատած յանդիման հարուածներ կուտան . և երբ հարուածը ստատիկ կըլլայ , կը շարքեն ձգուի , որ կհայն գրեզ" . աչքը կապուած խեղճ իւր աչքը բացուելու համար խորխորակով կը ձգեն , կը քնին իւր հարստաշարքը դանկու : Ասանկ աչքը կապուած խորխորակներէն շատերը ձրի հարուածներէն աղքատուելու ջանքով անխնայ ստիպանքին թափուելու միջոցին՝ յանկարծ ոտքերնին տաշած թատրին սահմանէն դուրս կելլեն : Իսկ տասնի կոյր զիւրոյն խորխորակու տան կարծեալ խորհրդով անխորտ անոր տար փաշտպանէն չկրտուած , այլ իւր ծայրագոյն ճարտիկութեամբ բուն իսկ հարստաշարքէն ձերբակալ ընող հովիւր ո՞ր է , զորն է գտանել :

Համանման խաղ մը կը շարունակէ Պանարմայու : Լուսա

(1) Այս յօդուածը՝ պատուաւոր անձի մը ձեռք յղարկեցաւ մէջ ի նրատարակութիւն : Սակայն երբ անոր մէջ պատկեր կամ ծառ մեկնութիւններ կը գտնուին , և ցանցեր ուղղելու համար պատուաւոր մի կողմէն գրեք , Արշալոյսը պատրաստ է սիրով նրատարակելու նաեւ նոյն պատուաւորներ , երբեք հաճելու համար արդարաբար և անպարտաւոր :

Կը հաստատեն թէ բարձրագոյն կայսերազուն Սաքսիմիլիանոս արշիւղուքը ընդունելու է Մէքսիքոյի կայսերական թաղը . զոր նոյն երկրին ազգային գլխաւորայ ժողովը կը մատուցանէ "Երկին Բարձրութեանը" "Երկրէն կայսեր ազգեցութեամբը և հաճութեամբը : Սակայն յիշեալ արշիւղուքը , որ հեռուտես և խոհեմ անձ մըն է . քանի մը պայմաններ կը դնէ իւր ընդունելութեանը , որոցմէ զլսաւորը՝ զաղղիացի զօրաց ժամանակ մի յիշեալ երկրին մէջ մնալն է : Այս պայմանը ամենահարկաւոր է անհրաժեշտ է . վստահի կըսուի թէ Մէքսիքոյի բոլոր ժողովուրդը համաձայն չէ այս ընտրութեանը վերայ : Ի ճշտոյն Տէր-Նիւզ օրդը իւր խրատ կուտայ Սաքսիմիլիանոս արշիւղքին , որ չընդունի Մէքսիքոյի կայսերական թաղը . զոր Անգլիան կամք չունի , կըսէ , ապահովեցնելու իրեն :

Սակայն Գալղի լրագիրը կը գովէ Գաղղիոյ բռնած ընթացքը Մէքսիքոյի մէջ և կը յաւելու թէ , եթէ Գաղղիան և Աւստրիան կարող կըլլան հաստատելու ստացուածոց և անձանց ապահովութիւնը , Եւրոպան և Մէքսիքոյի ժողովուրդները երախտապարտ պիտի ըլլան անոնց :

Կերեկ թէ Անգլիոյ կառավարութիւնը ընդգիմութիւն չընեն այս ընտրութեանը և պատրաստ է իսկ իւր հաւանութիւնը տալու , բարեկամական միջնորդութեամբ Պալմէրսթոնի Լէօքլու թաղաւորին , որ Սաքսիմիլիանոս արշիւղքին աներն է :

Յայտնի է որ Աւստրիոյ կայսրը ինքնապիւր նամակաւ մի հրաւիրեց Գերմանիոյ մեծ և փոքր վեհապետները որ ի ժողով դուստրուին Գերմանիոյ մէջ , վերանորոգելու համար գերմանական գաշնակչութիւնը : Բայց ի Բրուսելոյ և Տանիմարայի թաղաւորներէն , միւս վեհապետները զրեթէ ամենքը ներկայ գտնուեցան այս խորհրդակցութեանը :

Մեր նախընթաց թուոյն քաղաքական Տեսութեմը մէջ , Աւստրիոյ և Բրուսելոյ վեհապետաց Վասիէյն քաղաքը երթալու և իրարու հետ անհուկ ծանուցանելով՝ յաւելցուցին թէ , այս տեսութիւնը միայն քառորդ մի տեսեց և անոր նպատակը ի՞նչ ըլլալ :

Երջակոն Հայոց մանկանց մտայ լուսաւորութեանը նպատակով բացուիլ թատրոն մէջ , զրեթէ 1820 թուականէ հետէ . այսինքն արդի գերագաւառ Եւրասիան առաջնորդի ծնած օրէ հետէ :

Քանզի այսչափ տարի է ի վեր (մասնաւորապէս Պանարմայու նկատմամբ կըլլաւ) մտայ մշակութեան աւարտակով յիշեալ թատրոն մէջ խորխորակ հովիւն . բուն ուրքը յանկարծ հարստաշարքաց 5-4 կամ 6-7 ստորագրութեամբ նախընտ (նկարած) մահաբարձութեան օժտին քառած՝ վերջապէս պարտաւորուել են աղղախորձան խաղին կեդրոնէն հեռանալու : Բռնանք նուս կենդանի վիշտ քեզ աշտապիկ Անգլիանուարոյ տուտմասը և գերապատիւ առաջնորդ տէր Արխաուկիս օրրադան արքայականութեան , որ մտայ մշակութեանը համար անգաղար բարեմտութիւն է իւր օրրադան Պաշկին վրայ . սակայն Երկին Արաքսութիւնը Պանարմայու մէջ ի՞նչ . . հայեցէ՛ք բազմաթիւ Միլիթանուարոյ զարոյցը Պանարմայու հետ :

Այս ըստմաներու դարձեալ քեզի վիշտ ճանախարհայ ըլլալ 1850 թին պանարմայուց ո՛րեք ուղղութիւնով առ աղղային վարչութիւն դրուոր անգիւղութիւն տուող Հայաւանքի Հայրիկը , (որուն դրաթեանը մի կտորը , եթէ պէտք ըլլայ , պատրաստ եմք տալ հրատարակելու համար) և անոր հետ մի կտոր վիշտ կենդանի միտքիտութեան և բռնակալութեան անհաշտ թշնամին Պրիլոր անձնանուէր վարչապետ Աղանեանը :

Ահա՛ առանկով Պանարմայու զարոյցին անուղղակի հարուածը ստուերներ աներեղթ միայն մինչև այս

լալ տակաւին չյայտնուեցաւ : Բայց այս օրուան օրս ամենքը կը հաստատեն թէ Աւստրիոյ կայսրը Վասիէյն զայցած է հրաւիրելու համար զԲրուսելոյ թաղաւորը որ անձամբ մասնակից ըլլայ այս խորհրդին : Բայց յայտնաւէ Գերմանիոյ մէջ ժողովուած գերմանական վեհապետները և անոնց հետ Աւստրիոյ կայսրն ալ , միաբանութեամբ հրաւիրական նամակով գրեցին և Սաքսի թաղաւորը տարաւ զայն ի Պէրլին . սակայն շուտով վերադարձաւ ի Գերմանիոյ քաղաքներէն : Գերմանիոյ վեհապետութեանը չուղեր մասնակից ըլլալ այս խորհրդակցութեան , ուր Աւստրիոյ կայսրը գերմանական գաշնակցութեան վրայ չէի նաւոր նորոգութիւն մի պիտի առաջարկէ : Բայց այս խնդրոյն մէջ Բրուսիան և Աւստրիան իրարու հետ հակառակ են թէ՛ քաղաքական և թէ՛ տնտեսական նկատմամբ : Բանդի Աւստրիան , որուն ազգեցութիւնը տկարացած է Գերմանիոյ ազգային ընդհանուր դուրս մէջ , կուզէ զօրացնել զայն ի միաս Բրուսիոյ , վերանորոգութիւն մի առաջարկելով գերմանական գաշնակցութեան վրայ . զոր Բրուսիան կուզէ հաստատուն պահել իւր վաղեմի հիմանց վերայ :

Չօրապետ Գալղիին , որ Յունաստանի դեսպան է Փարիզի մէջ , Աթէնքի ազգային ժողովոյն կողմանէ որոշուեցաւ , որ ուղեկից ըլլայ Հելլենացոց նորընտիր թաղաւորին մինչև Աթէնս : Կը հաստատեն թէ յիշեալ զօրապետը օգոստոսի վերջին օրերը Փարիզէն պիտի մեկնի Գերմանիոյ երթալու և սեպտեմբերի սկիզբը Գերմանիոյ առաջին ծաղկահասակ թաղաւորին հետ ճամբայ պիտի ելլէ Աթէնք դալու : Փարիզի Լա Վալիէ լրագիրը հետեւեալ աղղիկութիւնները կուտայ յիշեալ թաղաւորին Յունաստան գալու պարագայից վրայ .

«Եւրոպայի մը հետ ձայն մի տարածուեցաւ թէ Յունաստանի նոր թաղաւորը կը փափաքէ որ օտար տեղութեանց զօրապետ մի պահպանութիւն ընէ իւր թաղաւորութեանը մէջ : Այս ձայնը բոլորովին անհիմն ըլլալով , Գերմանիոյ առաջին կամեցաւ անոր սուտ ըլլալ յայտնել պաշտօնական կերպիւ ու դեսպա

տարուան Յուլի 14 կիրակի օրը :

Յուլի 14ի պատմութիւնը ընկէ առաջ՝ գոնէ այս տարուան մարտին սկսել հարկ կըլլայ :

Ո՛հ հայր Եւրասիան անխնայ առաջնորդ , աչքիդ լոյս . քանզի ահա կիւս ճամբորդութիւնը աշխարհածանօթ ըլլալու կարգը :

Այս լինչեւ վերը ըսինք , թէ ճարտիկ հովիւր գործ է գտնուել . զիտեք որ յիշեալ խաղին օրէնքն է աչքը կապուած անձը ձեռքը բաց խորխորակու , հարուած տուող լանկու և բոտ օրինի կապուել համար . բայց Պանարմայու արդի գերագաւառ Առաջնորդը (չատ իւր բնակութիւն) չէ թէ ձեռքը բաց կըլլար խաղին , այլ սուր ի ձեռքն զարոյցին հարուած տուողներուն կտկէն կը պնդի ոչ թէ բռնել կապելու համար , այլ հալածելու , սպաննելու և ջրացնելու ջանքով :

Ի վերջոյ լաւ նշմարեց ու ճանչցաւ յառաջագնացութեան թշնամիները , զաղանքի բուէի տակերները , միւս պատմութեան բռնակալները , տղաւորութեան պաշտպանները , անձնակնդիր ու շահախնդիր մոլորները և իրենց կամքը օրինաց տեղ ու խօսքերնին մէյնիկ աղղու պատգամներու տեղ դնող անղղամները , ալ ի՞նչ կուզեն . թողունք այլոց՝ բուն իսկ իւրեանց գաւառները կանոնաւոր կերպով դատարարակիւ անխորթ եղող թշուառականները ճանչցաւ արդարեւ հնարագիւտ հովիւր : Աթէնս այս աղղապետները հինգ տարի առաջ Պօլոյ մէջ զօրապետ պաշտպան չգտնուցին , անուշտ պօլսեյիք ալ պիտի ծանոնային տանց ուղղոյն շարութիւնը :

Սորա թէ կը կրցան առ ժամն կերպով մը իրենց լինչ

գործակալը փոխել և անոր տեղը օտար մի դնել։ Իսկ յայնմանէ յիշեալ տեղացի գործակալը՝ իւր գործակալութեան պաշտօնէն ելելէ ետեւ և պիտի չկրնայ վայելել զպաշտպանութիւնը այն տէրութեան որուն ծառայութեանը մէջ գտնուեցաւ։

Յօդ. 7. Հիւպատոսի փոխանորդ մի կամ փոխանորդական գործակալ մի պիտի չկրնայ իւր պաշտօնը վարել առանց չհամաձայնի մի (պէրաթ) ընդունելու կայսերական ատենանէն, միջոցաւ Արտանդնու պոլիս գտնուող իւր գետնանին։

Յօդ. 8. Բարձրագոյն Գրան հպատակ մի՝ օտար տէրութեան հպատակի մը ծառայութեան մէջ զբաւնուելով կամ անոր կողմանէ պաշտօն մի վարելով՝ չկրնար օսմանեան իրաւասութեան տրուել։ Այլ իւր ձեռքովը տեսնուած և իրեն հոգաւորութեանը յանձնուած օտար հպատակին գործքերը միայն օտար պաշտպանութիւն պիտի վայելեն։

Այս գործքերը տեղական իշխանութեանց ծանուցանելու համար, օտար տէրութեանց հպատակները եթէ առեւտրական ընկերութիւն մի կրնան օսմանեան հպատակի մը հետ կամ եթէ յատուկ գործ մի կը յանձնեն անոր պէտք է որ պայմանագրութիւն մի ստորագրեն ըստ օրինաց՝ իրենց գտնուած քաղաքին վաճառականութեան ատենանին առջև։ Կամ եթէ ընկելու ծառայութիւնը՝ պայմանագրութեան կարօտ չէ յայնմամբ նոյն քաղաքին կառավարչին իմաց տալու է այս ծառայութիւնը, որ արձանագրել տայ։

Յօդ. 9. Օտար հպատակաց գործքերը օսմանեան հպատակաց յանձնուած ըլլալով ըստ նախընթաց կանոնին՝ նոյն գործքերը կրնան օտար պաշտպանութիւն ունենալ։ Բայց նոյն օսմանեան հպատակները երբեք պիտի չզգալարին Բարձրագոյն Գրան հիւպատակ ըլլալէ և իրենց մասնաւոր գործողը համարուելու անձնական իրաւաբերեալ խնդիրներու համար՝ միշտ օսմանեան իրաւասութեան ներքեւ պիտի ըլլան։ Այս պայմանը յատկապէս օտար հպատակաց ընկերացը և գործակալացը կը վերաբերի։

Այսու ամենայնիւ, օտար տէրութեանց հպատակ չկրնայ ըլլալ անոր ծառայութեան մի վանուց համար պիտի չհորհուրէ այս որպէսզի հաստատութեանց իւրաքանչիւրը վարող ըլլայ հոգաբարձու մի (բրոքերէթօր) և թարգման մի ունենալ, որոնք՝ ըստ օրինակի հիւպատարանաց պաշտօնատարաց, ժամանակաւոր պաշտպանութեան արտօնութիւնները պիտի վայելեն։

Յօդ. 10. Հիւպատոսները, հիւպատոսի փոխանորդները և հիւպատոսական գործակալները՝ այսուհետեւ պիտի չկրնան պաշտպանութիւն մատուցանել խանութից և խանութիցանաց, որ և է պատճառաւ։

Յօդ. 11. Յայտնի է որ առանձնաշնորհութիւն

ունեցող պաշտօնակալաց պաշտպանութիւնը, ինչպէս որ զրուցուեցաւ նախընթաց յօդուածոց մէջ, բոլորովին անձնական է և միայն իրական ծառայութեան հետ կապուած։ Ուստի այս պաշտպանութիւնը չկրնար շնորհուիլ պատուոյ համար և ոչ ընդարձակուիլ ի վերայ այն անձանց որոնք զադրած են ի ծառայութեանէ, և ոչ ազգականաց վերայ։ Եթէ պէտեւ ազատ կը համարուին ի դատաստանական օրէնքէ հետամտուութեան վասն գործոց, որ պատահած են հիւպատոսաց քով ծառայութեան մէջ գտնուած ժամանակին։ Տեղական կառավարչները պիտի հսկեն միաբանութեամբ հիւպատոսաց, որ այս պաշտպանութեան պարտքը եղած իրենց անշարժ ստացուածոց հարկերը կանոնաւոր կերպիւ հատուցուին, որպէսզի իրենց ծառայութեան ելած ժամանակը՝ ենթակայ չըլլան դատաստանական հետամտութեան կայսերական պանձուն մնացած իրենց պարտուցը համար։ Քիտել արժան է, որ պաշտպանեալները (բրոքէթէ) որչափ ժամանակ որ կը վայելեն իրենց պաշտպանութիւնը, ուրիշ առիթ պիտի չվճարեն, բայց միայն անշարժ ստացուածոց վերաբերեալ տուրքը, և միւս հարկերը զորս նոյն իսկ օտարականները կը վճարեն։ Վասնորոյ պաշտպանութիւնը դադարէ ետեւ անոնց զէմ դատաստանական հետամտութիւն պիտի չկրնայ ըլլալ վասն հատուցման այն հարկաց, զորս ըստ օրինաց պարտաւորեալ չեն վճարելու պաշտպանութիւն ունեցած ժամանակին։

Յօդ. 12. Հիւպատոսաց տեղացի սպասաւորները՝ առանձնաշնորհութիւն ունեցող պաշտօնակալաց կարգէն չըլլալով, ամենեւին իրաւունք մի պիտի չունենան որ և է պաշտպանութիւն մի վայելելու։ Այսու ամենայնիւ անոնց հետ այնպիսի կերպիւ վարուելու է, որ համար ըլլայ հիւպատոսին մատուցուելու յարգանքը։ Ուստի տեղական իշխանութիւնները պիտի չկրնան բռնել և բանտարկել զանոնք առանց կերպապէս և ըստ ժամանակին լուր տալու այն հիւպատոսին, որուն սպասաւորութիւն կը ընեն։

Ա.Ր.Գ.Ե.ՅԻՆ

Ս.Ո. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԴԱՍՏԱՆՍ

Աղջկանց վարժարան մի, Բարձրնոս կոչուած, որ Գարեգէն և Լ. Նոսրուհի եկած եւրոպացի տիկնացիւր լուծեան ներքեւ կը գտնուի, այս օրերս բացուեցաւ։ Այրաւամ սօքաղը ըսուած թաղը Միքայէլին տունը։ Իզմիրի մէջ հինգ տարի վարժապետութեան պաշտօնը վարելով, բաւական փորձառութիւն ստացանք։ Ուստի մեծ յոյս ունիմք ի վերայ յաջողութեան մեր բացած ուսումնարանին, որ յատկապէս Լ. Նոսրուհի աղջկանց ծաղկահասակ աղջկանց՝ զորս կուգին ընտելացանել եւրոպական լեզուաց հետ։

Այս նպատակաւ պատիւ անձանցս կը համարեմք իմաց աւալ հայկազուն գերդաստանաց, որոնք այս քաղաքիս բնակչաց մէկ պատուաւոր մասը կը կազմեն, որպէսզի եթէ կը բարեհաճին պատուել զմեզ իրենց վստահութեամբը, ամեն ջանք ի գործ պիտի դնեմք զոչ ընելու համար զիրենք։ Գարձեալ կը ծանուցանեմք թէ հայերէնի համար յատուկ դասատուութիւն մի պիտի հաստատուի յիշեալ գաղտնի մէջ, եթէ բաւական թուով Հայ աշակերտութիւն գտնուի։

Վարժապետը, զոր խորհրդով պատուական թաղի մը մէջ ընտրեցինք վասն բարեկեցութեան գիշերօթիկ աշակերտութեանց, օգաւաղաց (հաւատար) գեղեցիկ տուն մըն է և ամեն գիւրութիւնները կը մատուցանէ զորս գերդաստանաց մարքն կրնան խնդրել իրենց զաւակաց համար։

Դասատուութիւնները պիտի սկսին Օգոստոսի 31 ին (Սեպտեմբերի 12 ըստ նոր տոմարի) շաբաթ օրը, առաւօտեան ժամը 8ին ըստ Եւրոպացոց։

Ով որ կուգէ աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ, կրնայ ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ կէսօրէն ետեւ ժամը 4էն մինչև 6 յիշեալ վարժարանը երթալ, որ ինչպէս վերը յիշեցինք, Այրաւամ սօքաղը կոչուած թաղը Միքայէլին տունն է։

Իշմիր, 17—29 Օգոստոսի 1863։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԶԻ

Բարձրնոս կոչուած ուսումնարանին։

Այս անունով Մանչեսթրի մէջ հայերէն աշխարհաբար լեզուաւ լրագիր մի սկսաւ հրատարակուիլ, խմբագրութեամբ գերապատիւ տէր Կարապետ վարդապետի Շահնազարեանց։ Որ յիշեալ քաղաքին Հայոց հոգեւոր հովիւն է։

Երկրագունդը՝ որ շաբաթը անգամ մի պիտի հրատարակուի, քաղաքական, դրական, գիտական, կրօնական և առեւտրական տեղեկութիւններ պիտի տայ։ Անոր առաջին թիւը՝ զոր մեր աչաց առջև ունինք, Յուլիս 18—30ին տպուած է։ Իսկ երկրորդ թիւը՝ Հոկտեմբերի 1ին (ըստ նոր տոմարի) տպուելով, անընդհատ պիտի շարունակուի։ Այս երկու ամսուան միջոցը խորհրդով շնորհուած է բարեութիւն հասարակութեանը, որ փութան բաժանորդ գրուիլ Երկրագունդին։ Որուն ծախքը ելելու համար՝ գինն 500 բաժանորդ պէտք է որ գտնուին, կըսէ նոյն լրագրոյն խմբագիրը։ Ուստի ցանկալի է որ հայերէնաւեր և ուսումնասէր Հայերը բարենախաճ ոգով աշխատին ձեռնտու և նպաստամտոյց հանդիսանալ անոր, որպէսզի Երկրագունդը կարող ըլլայ յաջողութեամբ յառաջ երթալ և երկար ժամանակ գիտմանալ, թէպէտեւ գերապատիւ Շահնազարեանց Կարապետ վարդապետը ազգասիրաբար կը խոստանայ երեք տարի շարունակել զայն, թէ՛ յաջող և թէ՛ անյաջող պարագայ հանդիպելու ըլլայ։

Յիշեալ նորահաստատ լրագրոյն տարեկան արժէքը հանգերձ ծախիւք փոստայի, ուր երթան Երկրագունդը և Կաղզիոյ շոգենաւք և շոգեկաւք, 25 շեքլն է։

Փարիզ լրագրոյն 90երորդ թուոյն մէջ Մանչեսթրի իւր թղթակցին մէկ ցուցակը հրատարակուած էր, որ յիշեալ քաղաքին և Լիվրքուլի Հայ վաճառականաց անունները կը յայտնէ։ Այս ցուցակը մեք ևս հրատարակեցինք Արշալուստի Մայիսի 4 թուոյն մէջ հանգերձ Փարիզ լրագրոյն համաժողովուրդը, որ հետեւեալն է։

«Մենք երկու Հայ ևս կը ծանցնամք ի Մանչեսթրի, երկու եղբարք՝ Մեկերեան Պօլեյի, որոց անունները չեմք զիտեր ինչո՞ւ չեմք իր Մանչեսթրի մեզ գրկուած վերի ցանկին մէջ»։

Ըստ ետեւէն մեք ևս այսպէս գրած էինք։

«Փարիզ լրագրին այս ծանոթութեանը վերայ կը յաւելուեմք թէ, մեք ևս ուրիշ երկու զմեռեանցի Հայ հարուստ վաճառականներ կը ծանցնեմք Մանչեսթրի մէջ, որոնք առժամանակեայ կերպիւ Իզմիր դարձած են։ Ասանցմէ մէկն է մեծարդոյ մահմետի Յօսանէյն աղան Սարգսյանեան և երկրորդը՝ մեծարդոյ մահմետի Եղաղու աղան Տայիեան։ Որ ամուսն 2ին հինգշաբթի օրը Արտանդնու պոլիս գտնուած, ուսկից Բիւթիքէնէյի ճանապարհաւ Մանչեսթրի պիտի երթայ»։

Երկրագունդը մեր այս գրածին հարկ համարեք է հետեւեալ կերպիւ պատասխանելու։

«Արշալուստի Արարտեսանն, իր վերջին թուերու մէկին մէջ Մանչեսթրի բացաւ Հայոցմէ երկու իզմիրցի անձինք ևս ծանցել կըսէ, զոր Փարիզ, որպէս թէ մուսուլմանութեան տուեր էր։ Արդ մեզ կը խնդրեն հարցունել Արշալուստին թէ ի՞նչ է պատճառն, որ Իզմիրի երկու Հայ պարսկներն յիշատակելու առնեն, նոյն քաղաքի բնակիչ և Մանչեսթրի առաջին կարգի վաճառականներն մէկն, այսինքն Պ. Պարսո, մուսուլման է։ որ հոս կեկեղեցի հաստատուելու համար ոչ զրամ խնայեր է և ոչ ձիգն, ու առժամանակեայ հոգաբարձուաց մէկն էր։ Ինչպէս շատ աղէկ զիտէր և զիտէր Իզմիրի անտրանիկ թերթին»։

Այս կրիւք հարցմանը՝ Արշալուստը իւր սովորական համարտար ոգովը պատասխանելով կըսէ, թէ նոյն երկու Հայ պարսկները յիշատակելու ժամանակը՝ իրաւ որ միտքն եղած է Պ. Պարսոյն անունն ալ յիշել։ զոր իւր բարեկամը կը կարծէ։ Հետեւաբար չէր կրնար խորհրդով մտնալ զնա և ամենեւին պատճառ մըն ալ չունէր այսպէս ընելու։ Իսկ այժմ ուրախ եմք խմբագրութեան Պ. Պարսո՝ Մանչեսթրի կեկեղեցին հաստատուելու համար ոչ զրամ խնայեր է և ոչ ձիգն, ու առժամանակեայ հոգաբարձուաց ալ մէկն էր։ զոր չէմք զիտեր։

Արդ մեր պատասխանը այսպէս անկեղծաբար և բարեկամութեամբ տալէ ետեւ, մեզմէ ևս կը խնդրեն հարցանել Երկրագունդին, թէ ի՞նչ է պատճառը որ այսքան կարեւորութիւն (importance) կուտայ նոյն յիշատակութեանը Արշալուստի մէջ և ինչո՞ւ համար իւր առաջին թիւը անտեղի վաճառութեան, պարսպանաց և կր

գործակալ, նոյն իրիկունը նոր ընկերութիւն մը կազմեցին։ Որուն անունը գրին Քեհրախանըրիւն Բուրխանեաւը։ Այս քաղաքը ընկերութիւնը կազմող և վճարողներն են հետեւեալ աղջկանք և ուսումնասիր անձինքը։

- Տեղացի աղջկանք՝ Գերապատիւ Աւանդորդ,
- Յովհաննէս աղա Խնձկեան,
- Մահմետի Գալիթ աղա Սարգիսեան,
- Գալիթ աղա Սարգիսեան,
- Աւանդի աղա Սարգիսեան զմեռեանցի,
- Գանիկ աղա Տայիեան,
- Մահմետի Գալիթ աղա Խանձկիցի,
- Գալիթ աղա Մ. Թադեոսեան,
- Օննիկ աղա հովհաննէս Հայ,
- Նախիկ միւստի և այլք միւսն մէկուրի մեծարքոյ Մէհմետ աղա Պօլեյի,
- Մահմետի Ոսկէհան աղա Հիւլիթեան,
- Ստեփան աղա Չիլիթեան,
- Յովհաննէս աղա տէր Արտեմեան,
- Ոսկէհան աղա Քալանձը,
- Գրիգոր աղա Պալապանեան,
- Մատթէոս աղա Արքուանեան,
- Մանուէլ աղա Վարդանեան։

Հայկազունի տարեկան վարձըր աս կերպով կանխիկ պարտաւորեցին վերջիշաբթի աղջկանք, որոց շնորհիւ հիմնադրեցին կը շարունակուի Պանդոմոյու գաղտնի մէջ հայկազունութեան, գաղտնիքն, սրբազան պատմութեան, քրիստոնէական վարդապետութեան, և Հայոց պատմութեան և թուարանութեան ուսմունքը։ Աստուած չոր աչքէն պահէ և ամէն։

Մեյրն Պ. Պ. Փափագեանց։

դիմարմունքի համար զորքը կընէ. այնինչ նոր իսկ թույն մէջ հետեւեալ քաղաքը կընկարգուի. «Այլ որ լրացուի չարախօսութեան, անտեղի վիճաբանութեան, պարտաւանայ, երգիծարմունքի համար և անձնուշուկութեան զորքը կընէ, նա իր պաշտօնին դէմ կըմեղանայ»:

Վաղկաթայէն մեր ընդունած լուրերը Յունիսի Տէն եւ ըստ նոր տուեալի (Յունիսի 26): Ազգային երկ պատկերները կըշարունակուէր միշտ 'ի մեծ ցաւ սրտի ճշմարիտ ազգասիրաց և խաղաղասիրաց, որոնք անհամբերութեամբ կըսպասէին Աստուծապատիւ վեհափայլ Վաթնիկի տնային օրհնածիր կոնգրէսին գալստեանը, որ մի միայն դարման կըկարծուի եղբայրսիրութեան և միաբանութեան հաստատութեան յիշեալ մայրաքաղաքին մէջ:

— Յնձութեամբ սրտի կըծանուցանեմք թէ յիշեալ Հայրապետական կոնգրէսը, ըստ արժանահաւատ նոր լրացում ունիմք 'ի քննարկման, արդէն յուղարկուած է 'ի Վաթնիկի, ուր ցարդ հասած պիտի ըլլայ:

Այս ցանկալի կոնգրէսը գրեւծ է 'ի 29 Յունիսի ներկայ տարւոյ ընդհամարաւ 275 և ուղղեալ յանուն արժանապատիւ տէր Յովհաննէս խաչիկեան արքային աւագ քահանայի նոյն մայրաքաղաքին, հրաման տալով նմա քահանայադրութիւն ընել անփոփոխ 'ի տեղւոյն և արածութիւն ունենալ իւր կուրծքը կախելով զՀայրապետական և զկառավարչական պատուանշանս, չնորհալս ինքեան 'ի վարձատրութիւն հաւատարմ հոգեւոր ծառայութեանց իւրոց:

Ուստի յուսամք թէ Վաղկաթայի հայկազուն ժողովուրդը անցեալը մոռնալով, և արգարութիւնը ու ճշմարտութիւնը յարգելով, պիտի միաբանին եղբայրական սիրով ըստ յորդորանայ կոնգրէսին վեհափայլ տէր Մատթէոս սրբազնասուրբ Վաթնիկի տնային, որուն ազգասէր սիրտը ոչ սակաւ պիտի միջնորդուի, իմանալով զհաշտութիւնը և քրիստոնէական միաբանութիւնը Հայոց յիշեալ մայրաքաղաքին, որ Ազգային միութեան ընտիր մէկ մասն է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. 21 ՕԳՈՍՏՈՍ

Խառնից դեպքան մօտիւ Վարաչիօս տի Պէլա մարքէզը ամսոյն Տին հինգշաբթի օրը մեկնեցաւ Խառնիս երթալով, ուր ամիս մը մնալէ ետեւ, պիտի վերադառնայ իւր բարձր պաշտօնը վարելու:

Իւր մեկնէն յառաջ, օգոստոսի 21-ը յաւանդեցաւ Մէքիսիէ կարդին առաջին աստիճանի շքանշանը շնորհելու յիշեալ երեւելի պաշտօնատարին:

— Մայրաքաղաքին Յունաց պատրիարքին ընտրութեան համար անգլաքարական նամակներ յուղարկուեցան ամեն տեղ գտնուող եպիսկոպոսաց, որոնք իրենց քուէն կնքեալ նամակաւ մի պիտի յեղարկեն երեք պատրիարքացու գլխաւոր եկեղեցականաց համար Ազգային ժողովը Սեպտեմբերի վերջին օրերը յիշեալ քուէները պիտի համարէ և սուրբ Սինոդը՝ այս կերպիւ ընտրուած երեք պատրիարքացուներէն մէկը՝ Կ. Պօլոյն՝ Պատրիարք պիտի հրատարակէ:

— Մայրաքաղաքին Անգղիոյ դեպքան վոսմափայլ սըր Հանրի Պօլոյն շարքի օրը մեկնեցաւ ճանապարհորդութիւն մի ընելու Սեպտեմբեր օսմանեան նաւահանդիսները, նմանապէս Բուքարէսի մէջ և Ստամբուլի և Վաթնիկի Միացեալ իշխանութեանց երկիրները:

— Բարձրագոյն Իրան արտաքին գործոց թղթակցութեան գլխաւոր անդամ մեծարդոյ Իրիգոր է. քննարկելով Բոսֆորէսի մօտեւ Շիւքի և Կորդէկիցի թաղաւորէն իւրեանց Վաթնիկի տնային ասպետական կարգին շքանշանը ընկալաւ:

— Վըհաստատեն թէ մեծարդոյ և մեծահարուստ Արմենիոյ Պալմաճի Յոյն սեղանաւորը, որ Աստուրիոյ հարստի է, օսմանեան ազգայնութեան իրաւունքը ստացեր է Բ. Իրան յատուկ շնորհիւ:

ՔԱՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՅԱՆ

Ձմրուցի, 24 Օգոստոս:

Վսեմափայլ Ազմատ վաչան նահանգի ընդհանուր կառավարչը, անցեալ շաբթու շրջաբերական երկրորդ նամակ մի յաղարկելով մեծարդոյ հիւստիստաց քաղաքին յիշելով անոնց զմարմին բարձրագոյն հրամանը՝ 'ի մասին առեւտրու և խանութներու վարձի տրուելուն, որոց պայմանագրութիւնները պէտք է որ տեղեկան կառաւարկութեան առջև ըլլայ:

վարկութեան առջև ըլլայ: Վաճառի կիւլէ մը պատահելով ըլլայ, մասնաւոր կերպիւ կրօն պայմանագրութիւնները ամենին զօրութիւն պիտի հռչակեն դատաւարանի առջև, ու օրինադրեցները կրկնապատիկ հարկ պիտի վճարեն, այսինքն վարձքին գումարին վերայ հարուրին 5, փոխանակ հարուրին երկու քուէիսի որ օրինաւոր տուրքն է:

— Կայսերական հրովարտական, քաղաքի լայնութիւն մէմբը վոսմափայլ Նէշէթ—Պէշէ խալիփի համարակալ (մահաթապէի) անուանեցաւ, հանդերձ իւր առջի պաշտօնիւ: Իսկ խալիփի նախորդ համարակալ Ալի Բիւլա—Պէշէ միւնտի պաշտօնիւ ձեռնադրուեցաւ պիտի երթայ:

— Կայսերական ուրիշ հրովարտական մի, խալիփի ծխախոտի մարտին վաղմիս անուաճ ձաղիմ—Պէշէ՝ Ալաշի տեղակալ կառավարչի (գալմաթ) կարգեցաւ Սէֆէմէթ—Պէշէ տեղը:

— Մեր բարեխնամ Առաջնորդ գերապատիւ տէր Պօլոյն սրբազան արքեպիսկոպոսը անցեալ շաբթու մեկնեցաւ Պատապա երթալով, ուսկից իւր մէկ քանի թէմերուն ևս այցելութիւն պիտի ընէ:

— Յարդոյ Խոսնաքեան Վալուստ աղան, որ քաղաքին Անգղիոյ հիւստիստոստանին առաջին թորգման հանդուցեալ Խոսնաքեան Յօհաննէս աղային կրտսիր որդին է, խալիփի վաճառականութեան առեւտրին թորգման անուանեցաւ:

— Յորմէ հետէ մեծարդոյ Նալիլ—Պէշէ սրտաւ իւր պաշտօնը 'ի գործ դնել իրեն նախագահ քաղաքի վաճառականութեան առեւտրին, դատերը մեծ խնամք և ուշադրութեամբ կընայուն 'ի զոհանալութիւն իւր հասարակութեան:

— Նալուզի վաղմիս գալմաթ Նիլի Էֆէնտին քաղաքի երկնաւան յանդուցեալ հարցաբանութեան միջոցին նախագահ անուանեցաւ:

— Սեֆէմէթի հետեւ տեղեկութիւնները կուտան մեզ:

«Բարձրագոյն Պատրիարքային հրամանաւ Ներիֆ Կալան» որ Արքայութեան բարձրագոյն ատենին նախագահ էր, առժամանակեայ կերպիւ արտաքին գործոց պաշտօնից կարգեցաւ Չիլիֆիար վաչային տեղը. ուրուն ըստ երեւանց ուրիշ պաշտօն պիտի տրուի:

«Արքայութեան բարձրագոյն ատենին նախագահ հրովարտ Սպառլաճ վաչային յանձնուեցաւ և Ալի Բալուզիոյ նախորդ կառավարչի խորհրդով վաչան նոյն ատենին անդամ անուանեցաւ:

«Մուրադ վաչան» որ Ներիֆ վաչային քուստին է, Գաշիլի վաճառականութեան ատենին նախագահ կարգեցաւ, փոխանակ Ալի—Վաչա վաչային օրուն ուրիշ պաշտօն պիտի տրուի:

«Վսեմափայլ Նալուզ վաչան Կոստանդնուպօլիսին վերադառնալուն ամիսնապէս Գաշիլի գնաց. ուր բաւուր յարդանօք և մարդասիրութեամբ ընդունուեցաւ Եղիպտոսի Պատրիարքին:

«Նորին Բարձրութեան հրամանաց համաձայն, վսեմափայլ Նալուզ վաչան Պատրիարք գնաց կարեւոր պաշտօնի մը՝ որ տակաւին յայտնի չըլլալուն, զանազան մեկնութիւններ կուտան անոր վրայը»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒՄ

ՎԱՃԱՌԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ԱՏԵԱՆ ՁՄԻՌՆԻՈՅ

Ը.Ր.Գ.

Անոնք որ քաղաքի վաճառականութեան Ատենին անօքն երկալացնելու գործը ունին, և որոց ձեռքը ըստ կարգադրութեան վճարուելու պարտաւորեալներ կըգտնուին, նմանապէս պայմանագրութեաններ և ուրիշ ապացուցութեան րոքեր որոնք օտար լեզուաւ գրուած են, կըպարտաւորին՝ զատաստանը տեսնուելին քանի մը օր յառաջ, Դիմարքին գրասենեակը երբայ և զանոնք րոքերեկի քարգմանել տալ. վասնզի օտար լեզուաւ գրուած որ և քուստի մի պիտի չընդունուի:

Իգմիր, 15 Օգոստոսի 1865:

ՀՐԱՄԱՆԱԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յարդոյ իւր Տիմիթի Առնաւոտ օղուն, Արարական Արարչաւոր 703 թուոյն մէջ հրատարակել տուած իւր մէկ ծանուցումով, իւր փոխանորդ Սառա Բարէշի տիմիթ, ծախս հանած է հանդուցեալ մահաթի Յօհաննէս աղա Սեֆիլիանի մէկ տունը, երկրորդ Սարգիս աղա Կարապետեանի ուրիշ տուն մի, երրորդ հանդուցեալ Սեֆիլիան Սարգիս աղային կըկուտ իւր մէկ

տնեցած մէկ մուղաղան:

Արդ՝ իմաց կըտրուի բարեմիտ հասարակութեան թէ վերալիշեալ տունը և մուղաղան՝ իրենց մասնաւորութեանը ունենալով, իւր Տիմիթի Առնաւոտ օղուն առեւտրին իշխանութիւն հոնի ծախսուող գնանքը, և որպէսզի հասարակութիւնը զոյգ շահով, սոցիալական ծանուցումը հրատարակուեցաւ 'ի լուր ամենուն:

ՋԱՐՄԱՆ ԱԼԻ ԴԵՂՍԻ



Սպեղանի Թովմայի Հուրուէն:

Սպեղանի Թովմայի մտաց ամեն արտադրութիւնները ժամանակ մը տեղեւ ետեւ, նոր գիւտեր անոնց տեղը կը ընդունեն: Բայց այս խօսքը այս պէտքէն չէր բերեր. վասնզի օրուն մը համար չէ, այլ մշտապէս և անոր ներգործութիւնը ըստ որոշման արեւմտեան մէջ եղած հիւանդութեանց արմատները կը ջնջէ և բժշկութեան արհեստն ալ անկէջ աւելի բան մը չկրնար ձեռք բերել: Այս սպեղանի մտն և մարմնոյն մանրամասներուն մէջէն անցնելով ինչպէս որ ջուրը ծակակից բանէ մը կանցնի, կըրթայ կըտնէ խոյլ պարանոցի, օձիկ, ուսուցչի և քաղցիկը ըստած արտադրութեան արմատը, նմանապէս գէշ վերաց և պարանոցի մնացորդաց որ արեւմտեան շրջապատութիւնը կ'աւելնէ, և անոնց ապակիստութիւնը անհետ կընեն:

Յաւ սրունից:

Հրուսեայի սպեղանի ամեն գէղեքու մէջ կը բժշկէ սրունից (պալար) ցաւերը թէ և քսան տարուան ըլլայ: Որչափ կարծր գոշաթափ և ուռեցած ըլլայ մարմնը, այս ախտը չկրնար զիմաւալ, եթէ յիշեալ սպեղանին օրը երկու անգամ սուստապէս դրուի ցաւած տեղը և ալիկ մը շփուի: Յետոյ նոյն սպեղանին լաթի մը վրայ շառիկի քսելով ցաւած տեղը ծածկելու է: Այս կերպիւ եթէ շարունակ հոգ տարուի, վատաւոր չիւթերը դուրս կընեն. վերջերս քիչ ժամանակ մասն մէջ յարմարաց անտի կը բժշկուին և սրունից միւս մասերը իրենց բնական երևոյթը դարձեալ կըստանան:

Հին վերք, խոյ և քաղցիկը:

Խոյ պարանոցի, և ուրիշ խոցերը, որչափ և հնացեալ ըլլան, շուտով կը բժշկուին Հրուսեայի սպեղանի և գեղահատերը գործածելով: Այս գեղան ներգործութիւնը պալարաց և շարաւաղի քաղցիկը վրայ գրեթէ հաշտել է. քանի որ անոնք բերանը անոնց վրայէն կը հանէ զմիջոց որ լիսոցը կը քանդուի միշտ և հեռաւոր կը բժշկէ զանոնք:

Կծկումը ըլլայ և կարծրութիւն 'ի յօդաւորութիւն (օյնիք եւ լիքի):

Այս ակտերն ևս շուտով կը բժշկուին Հրուսեայի սպեղանիով, որ իւր ներգործութեամբ երեւելի հանդիսացաւ նաև անդամաւորութեան շատ գէպքերու մէջ:

Տեւտոս սու թիւն:

Այս սպեղանին տեւտոսութեան (մայաքը) ամենին վատագոյնը դէպքերը կը ծխէ, եթէ գործածեն զայն՝ ինչպէս որ պատուիրակ է ծանուցարարոյն մէջ:

Մորթոյին հիւանդութիւնը:

Խաղաղարմները (գաղարձը) չոր արտաքին յարձակումները և մարդոյ մարմնին ամեն գլխաւորութիւնները անեղի օրը կըլլան քանի մը անգամ այս սպեղանին քսելով: Գոյտ տուր օտարաբար արտաշնչութեան արմատ թեւեղ կըպատմուի և լատուրմա սպեղանին ներս մտնելով կըբանայ անմիջապէս մարմնին ծակիկը և կըջրուէ դրոքերու մէջ, առ կըպիւն հիւանդութիւնը անհետ կըլլայ: Այս տիկիները, որոց երեւոյթ և բարեկեցութիւնը սպեղանին մարմնին հիւանդութիւններով, կըսան աս ժողովուրդը, յիշ գործող գեղը գործածելով, շուտով անհետ ընել նոյն տեղը կըկուտ թիւնները և դարձեալ ձեռք բերել մարմնին բնական դոյնը և կըկուտ թիւնը:

Այս սպեղանին յատկապէս օգտակար է հետեւեալ ակտից: Ուսուցչի և քաղցիկի (չիլիկի) և Կարեւոր Գեղեւմէն կամ կեղեւմէն միսնոց կամ ըլլայ (միսի չիլիկի) և Կարեւոր (նաւոր): Խօսութիւններ մորմնի և Զօրացութեան (նաւոր) և Զօրացութեան (սրագա): Կեղեւմէն և Կարեւոր վերք (Յիւթիւ) և Ուսուցչութեան (նիգրիս): Սեֆիլիանութեան (պէլ սօվալուրու): Բոս և Լեւոյի հիւանդութիւնը: Խոյլ պարանոցի: Յաւ պարանոցի: Ափրոպիտեան ակտը և Կարեւոր ցաւաքի (թիք տուրուր):

Այս սպեղանին, որ կը շփուի զանոնք գտնուելի անձը զական վերապաշտութեամբ, անոր ընդհանուր գործարմաց մէջ կը ծախուին 'ի Լիւան Սեֆիլիան կուտած թաղ թիւ 244. և 'ի Նոր Երդ Սեֆիլիան Լէն թաղ թիւ 80. Իսկ ուրիշ երկրորդ, իւր գործարմաց քով կը գտնուին և որոց անունները հետեւեալներն են. Խալիփ Իբրա Գրեթ, Կատանդուպօլիսի Ա. Սեֆիլիան և Ֆ. Տեւտոստ, Արքայապետի Ֆ. Բեքրիսի Իմալիլի Կալաքի, Բիսի կղզին Տ. Սեֆիլիան, Մալմա Ե. Սեֆիլիան, Գրեթ Երկր Վալայ:

Յիշեալ սպեղանին տեւտոսութեան մեծութեամբ են և կը ծախուին 9, 22, 33, 38, 176 և 264 զուգուր իւրաքանչիւրը, և ամէն մեկուն մէջ հայրենի լեզուաւ ծանուցարար մը կայ, որ այս սպեղանին գործածութեան վրայօք մանրամասն տեղեկութիւններ կուտայ:

Խալիփի—տէր լրագրոյց:

Գրեթ Գ. Պալարաքի:

ԻՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՒՅՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ